**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4**
**« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20/1» ԾԱԾԿԱԳՐՈՎ**
**ՄՐՑՈՒՅԹԻ (ԳՀ) ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ**

ք. Երևան 13-ը ապրիլ 2018թ.
ժամը 11⁰⁰

Մասնակցում էին՝
**Գնահատողներ՝**
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ՏԱ վարչության պետ տեղակալ, գնդապետ Տ. Մաթևոսյան (ԳԱՊ),
ՀՀ ԶՈՒ ԻԶՎ Ս բաժնի պետ, գնդապետ Յու. Եսայան
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ՏԱ վարչության ինժեներական, հետախուզական և քիմիական միջոցներով ապահովման բաժնի գլխավոր մասնագետ Տ. Գասպարյան,
ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության հատուկ օպերատիվ ծառայության ավագ սպա, մայոր Հ. Բարսեղյան,
ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության իրավական ապահովման բաժնի ավագ սպա, փոխգնդապետ Ա. Մաղաքյան:
**Գնումները համակարգող՝**
ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության նյութատեխնիկական միջոցների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի գլխավոր մասնագետ, ՔՀԾ 2-րդ դասի խորհրդական Տ. Բաղդասարյան:

**« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20/1» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.**

---

(Տ.Բաղդասարյան)

1. Մասնակցի՝ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20/1» ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իրեն համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց ԳՀ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

**1. Մասնակիցների՝ ԳՀ ընթացակարգի հրավերով պահանջվող(նախատեսված) որակավորման պահանջներին իրեն համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց ԲՄ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.**

---

(Տ.Բաղդասարյան)

1.1 Մասնակիցների «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20/1» ծածկագրով բաց մրցույթի հրավերով պահանջվող որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը առկա են և համապատասխանում են ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին: Առկա է եղել անհամապատասխանություն «Նարմի» ՍՊԸ-ի հայտում մասնավորապես՝ հավելված 6.1 ներկայացված 3-րդ չափաբաժնի ապրանքի տեխնիկական բնութագրերը թերի են ներկայացվել՝ նշված չէ մարտկոցների արտադրության տարեթիվը և Մահ 1500 (Mah 1500) /առկա է մասնագիտական եզրակացություն/: Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը՝ գնահատող հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է որակավորման փաստաթղթերի գնահատման նիստը և պահանջել շտկում: Սահմանված ժամկետում ներկայացվել է շտկումը և գնահատող հանձնաժողովը գնահատել է բավարար /առկա է մասնագիտական եզրակացություն/ 02.05.2018թ.:
Որակավորման չափանիշների համապատասխանությունը հավաստող փաստաթղթեր չի ներկայացրել «Մեգապոլիս Թրեյդ» ՍՊԸ-ն, սահմանված ժամանակին ուստի գնահատող հանձնաժողովը մերժեց հայտ:
26.04.2018թ 1-ին չափաբաժնի մասով մասով հրավիրվել է բանակցություններ /սահմանված կարգով ծանուցվել է բոլոր հայտ ներկայացված մասնակիցներին նշված չափաբաժինների մասով/ վերոնշյալ չափաբաժինների մասով մասնակիցները իրենց գնային առաջարկները թողել են անփոփոխ ուստի գնահատող հանձնաժողովը համաձայն ՀՀ <Գնումների մասին> օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետի վերոնշյալ չափաբաժինները հայտարարեց չկայացած:
***ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի՝ ՀՀ կառավարության 04.05.2011թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացության համաձայն, մասնակիցները Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունեն, իսկ***

***հրավերով նախատեսված «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող որակավորման պահանջներն առկա են:***

1.2 05.05.2018թ. որակավորման նիստի ավարտի օրը՝ հիմք ընդունելով հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց մասնակիցներին որակավորման հատկանիշները գնահատել համապատասխան «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20/1» ծածկագրով բաց մրցույթի հրավերի պահանջներին և վերջինիս հայտարարել ընտրված/հաղթող/ մասնակիցներ և վերջինիս պայմանագրեր կնքելու առաջարկ ներկայացնել «Նարմի» ՍՊԸ, «Երվադա» ՍՊԸ և «Ֆորտունատե» ՍՊԸ-ներին:

1.3 Հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20/1» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը հրապարակել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

**2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.**

---

(Տ.Բաղդասարյան)

Հանձնաժողովը որոշեց հայտարարել « ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20/1» ծածկագրով ընթացակարգի արդյունքները և հաստատել կնքվելիք պայմանագրի մասին հայտարարության տեքստը: Հանձնաժողովի նիստը հրավիրել գնման պայմանագրեր կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող օրացուցային օրը ժամը 11:00-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

**Գնահատող (ԳԱՊ)** — Տ. Մաթևոսյան

**Գնահատող** — Յու. Եսայան

**Գնահատող** — Հ. Բարսեղյան

**Գնահատող** — Ա. Մաղաքյան

**Գնահատող** — Տ.Գասպարյան

**Գնումները համակարգող՝** — Տ. Բաղդասարյան